ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

_____ № _____

Ձեր № _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ««ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան

Կից ներկայացնում ենք Ձեր 24.02.2015թ.N 37/37.2/2700-15 գրությամբ ներկայացված ««Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Առդիր՝ 2 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ***ՊԱՎԵԼ ՍԱՖԱՐՅԱՆ***

Կատ.՝ Վիլհելմ Գրիգորյան
☎ (011) 800-137

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերով առաջարկվում է.

1. ապրանքային նշանի գրանցման գործողության երկարաձգման գործընթացը իրականացնել 10 աշխատանքային օրվա ընթացքում, ներկայումս սահմանված մեկ ամսվա փոխարեն,

2. ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների փոխանցման գրանցման գործընթացը իրականացնել 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայումս սահմանված մեկ ամսվա փոխարեն,

3. ապրանքային նշանների գրանցման հայտի և համապատասխան փաստաթղթերի համապատասխանության ստուգման և թերությունների վերացման համար հայտատուին ծանուցման համար սահմանել 4 աշխատանքային օր՝ ներկայումս սահմանված 5-օրյա ժամկետի փոխարեն,

4. ապրանքային նշանի գրանցման հայտի նախնական փորձաքննության անցկացման և ապրանքային նշանների հայտերի հիմնապաշարում գրանցելու համար սահմանել 10 աշխատանքայի օր՝ ներկայումս սահմանված մեկ ամսվա փոխարեն,

5. գործակալության կողմից ապրանքային նշաններին առնչվող որևէ որոշում կայացնելուց հետո հայտատուին (դիմումատուին) որոշման մասին էլեկտրոնային կապի միջոցներով ծանուցման համար սահմանել 1 աշխատաքային օր ժամկետ՝ ներկայիս 5, իսկ որոշ դեպքերում 10 աշխատանքային օրվա փոխարեն,

6. ապրանքային նշանը պետական գրանցամատյանում գրանցելու համար սահմանել 10 աշխատանքային օր՝ ներկայումս սահմանված մեկ ամսվա փոխարեն,

7. ապրանքային նշանի վկայագրի, ինչպես նաև վկայագրի կրկնակի հանձնման համար սահմանել 5 աշխատանքային օր՝ ներկայումս սահմանված համապատասխանաբար մեկ ամսվա և 10 օրվա փոխարեն,

8. հայտում և պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար սահմանել 5 աշխատանքային օր՝ ներկայումս սահմանված մեկ ամսվա փոխարեն,

9. միջազգային հայտի քննարկման համար սահմանել 20 աշխատանքային օր՝ ներկայումս սահմանված մեկ ամսվա փոխարեն,

10. պետական տուրքը օրենքով սահմանված կարգով զեղչով վճարելու դեպքերում, օրենքի համապատասխան հոդվածներում լրացնել պետական տուրքի վճարման օրվա դրությամբ աշխատողների թվի մասին տեղեկանքի ներկայացման պահանջը, որի նպատակն է տնտեսավարող սուբյեկտների համար օրենքով նախատեսված հնարավորությունների հստակեցումը,

11. ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու դեպքը նույնպես ներառել «Պետական տուրքերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված զեղչերի ցանկում, քանի որ գործնականում մինչև 25 և 25-ից 100 աշխատող ունեցող տնտեսավարող սուբյեկտները պետական տուրքերի զեղչերից օգտվելու նպատակով ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու հայտի փոխարեն ներկայացնում են ապրանքային նշանի գրանցման հայտ,

12. ապրանքային նշանների գրանցման և վկայագիր տալու համար պետական տուրքերը ժամկետի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում վճարվելու դեպքում դրանց չափերն ավելացնել 20 տոկոսով ներկայիս 50 տոկոսի փոխարեն, ինչպես սահմանված է մի շարք Եվրամիության անդամ երկրներում,

13. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը լրացնել նոր՝ ապրանքային նշանների պետական գրանցամատյանից քաղվածքներ տալու համար պետական տուրքը սահմանող ենթակետով՝ տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների համար իրավական ակտի դրույթը ավելի հասկանալի դարձնելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ օրենքների նախագծերի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կարող է լինել բացասական, սակայն ոչ էական: Սակայն ազդեցության կոնկրետ չափը հնարավոր չէ հաշվարկել՝ համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով:

Միաժամանակ Նախագծերի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի, ինչպես նաև ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 37/37.2/2700-15
24.02.2015թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան

Ի պատասխան Ձեր 24.02.15թ. № 37/37.2/2700-15 գրության՝ քննության առնելով «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը՝ (այսուհետ՝ Նախագիծ)՝ հայտնում ենք հետևյալը.

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող 6.1-րդ հոդվածով ամրագրվում է լիազոր մարմնի կողմից՝ ընդունված որոշման վերաբերյալ հայտատուի հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով տեղեկացնելու հնարավորությունը, որը մասնակիորեն ընդունելի չէ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չէ Մտավոր սեփականության գործակալության որոշումներն ու ծանուցագրերը հայտատուին ուղարկել հեռախոսային հաղորդագրության ձևով: Միաժամանակ կարծում ենք, որ ուղղակի հայտնելով, որ տվյալ հայտով որոշում է ընդունված, որևէ հարց չի լուծվում, քանի որ հայտատուն պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու տվյալ որոշման կամ ծանուցագրի բովանդակության հետ: Հենց այդ պատճառով է, որ հայտատուի կողմից որևէ գործողություն կատարելու համար սահմանված ժամկետի հաշվարկն իրականացվում է

Կատարող՝ Լուսինե Վահրամյան
Գործարար միջավայրի բարելավման վարչություն
597-134

համապատասխան որոշումը կամ ծանուցագիրը ստանալու օրվանից:

Միևնույն ժամանակ, Նախագծի 6.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվող «մեկ աշխատանքային օրվա ընթացքում» բառերն առաջարկում ենք փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

Կարծում ենք նաև, որ հստակեցման կարիք ունի երբ որևէ գործողության կատարման համար սահմանված ժամկետի դեպքում նշվում է «անմիջապես տեղեկացնում է հայտատուին» արտահայտությունը: Նույնը վերաբերում է նաև նշված հոդվածի 2-րդ մասով սահմանված ծանուցման ժամկետներին ու կարգին:

Միաժամանակ, կից տրամադրվում են Նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ հստակեցվում են ապրանքային նշանների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են հայտատուին ծանուցման կարգը և ժամկետները:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***ընդհանուր առմամբ դրական ազդեցություն՝*** հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով առաջարկվում է ապրանքային նշանների գրանցման և վկայագիր տալու համար պետական տուրքերը ժամկետի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում վճարվելու դեպքում դրանց չափերն ավելացնել 20 տոկոսով՝ ներկայիս 50 տոկոսի փոխարեն, ինչպես նաև առաջարկվում է ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու դեպքը նույնպես ներառել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված զեղչերի ցանկում, ինչը կնպաստի տնտեսվարող սուբյեկտների համար ֆինանսական ծախսերի և վարչարարության նվազեցմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

« »_____ 2015թ. N_____

Ձեր 2015 թվականի փետրվարի 24-ի
թիվ 37/37.2/2700-15 գրության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան

Ի պատասխան 2015 թվականի փետրվարի 24-ի թիվ 37/37.2/2700-15 գրության՝ Ձեզ եմ ներկայացնում «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

Կատ. իրավախորհրդատու
Լ. Նազարյան. հեռ. 581680

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

Եզրակացություն

«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ նախագծերի) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն:**

Կատ. Լ. Նազարյան
իրավախորհրդատու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Զ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD OF STAFF
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
Р У К О В О Д И Т Е Л Ь А П П А Р А Т А

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ.փոստ /E-mail/ эл.почта min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 1) 818 520

№_____

<< >>_____2015թ.

ՀՀ կառավարության աշխատակազմի
<< Օրենսդրության կարգավորման ազգային
կենտրոն>> ծրագրերի իրականացման
գրասենյակ>> պետական հիմնարկի տնօրեն
պարոն Ա. Եղիազարյանին

Հարգելի պարոն Եղիազարյան

Ի պատասխան Ձեր 24.02.2015թ. N37/37.2/2700-15 գրության, ներկայացնում եմ «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝
աշխատակազմի ղեկավարի ժ/պ Խ. Աղաբեկյան

Ա. Հարությունյան
011 818 503

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

_____N _____

Ձեր N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան

Ի պատասխան Ձեր՝ 24.02.2015թ. թիվ 37/37.2/2700-15 գրության, կից ներկայացվում է «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առողջապահության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Իրավաբանական վարչություն
Հեռ՝ 56-56-81

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի «Օրենսդրության
կարգավորման ազգային կենտրոն
ծրագրերի իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկի տնօրեն
պարոն Ա. Եղիազարյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 13-ի
37/37.2/19208-13 թվակիր հանձնարարականի և ի լրումն
մեր 2014 թվականի հունվարի 10-ի 02/68-14 գրության

Հարգելի պարոն Եղիազարյան

Կից ներկայացնում ենք ««Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին», ««Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի, «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների վնասված և (կամ) չօգտագործված դրոշմապիտակների վերադարձման կարգը սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարություն որոշումների նախագծերի առնչությամբ Հայաստանի

Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Հարգանքով՝ **Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Մ. Սահակյան, հեռ. 380 227

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

««Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**